

# ՈՒՂԵՑՈՒՅՑ

## Հարգելի քաղաքացիներ,

ԱՊՊԱ պայմանագրեր կնքելու համար կարող եք այցելել սույն ներդիրում նշված ապահովագրական ընկերություններից որևէ մեկի գրասենյակ, դիմել նրանց մասնաճյուղերին կամ ապահովագրական գործակալներին:

## ԱՊՊԱ պայմանագիր կնքելու համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը

- Ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր (տեխ. անձնագիր) կամ մաքսային վկայագիր,
- Ավտոտրանսպորտային միջոցի սեփականության կամ վարձակալության իրավունքը հավաստող փաստաթղթեր

### Ֆիզիկական անձ Ապահովադիրները ներկայացնում են նաև՝

- անձնագիրը,
- սոցիալական ապահովության քարտը (սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանք),
- վարորդական իրավունքի վկայականը,
- կապի միջոցները,
- վարորդական փորձի վերաբերյալ տեղեկանք ավտոտեսչությունից, եթե վարորդական վկայականի տվյալները չեն արտացոլում վարորդական փորձի մասին տեղեկատվությունը:

### Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր Ապահովադիրները ներկայացնում են նաև՝

- Ապահովադրի պետական գրանցման վկայականը,
- ՀՎՀՀ-ն,
- բանկային հաշվի տվյալները,
- կապի միջոցները:

### Եթե Ապահովադիր է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը՝

- Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող մարմնի, վերջինիս հասցեի վերաբերյալ տեղեկություններ

### Եթե Ապահովադիր է հանդիսանում օտարերկրյա պետությունը՝

- օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի, վերջինիս հասցեի վերաբերյալ տեղեկություններ

### Եթե Ապահովադիր է հանդիսանում Հայաստանի Հանրապետության համայնքը՝

- համայնքի անվանման, համայնքի անունից հանդես եկող մարմնի, վերջինիս հասցեի վերաբերյալ տեղեկություններ

### Վերը նշված տեղեկատվությունից բացի ավտեմեքենաների սեփականատերերը կամ լիազորված անձինք ապահովագրական ընկերություն են ներկայացնում նաև տրանսպորտային միջոցը վարող անձանց վերաբերյալ հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները՝

- անձնագիրը
- սոցիալական ապահովության քարտը (սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանք)
- վարորդական իրավունքի վկայականը
- վարորդական փորձի վերաբերյալ տեղեկանք ավտոտեսչությունից, եթե վարորդական վկայականի տվյալները չեն արտացոլում վարորդական փորձի մասին տեղեկատվությունը:
- կապի միջոցները

Ապահովագրական ընկերությունը իրավունք ունի Ձեզնից պահանջելու նաև այլ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են ԱՊՊԱ պայմանագրի համապատասխան դաշտերի լրացման կամ Ապահովադրի (լիազորված տիրապետողների) վթարավտանգության վրա ազդող և նրանց առողջական վիճակը բնութագրող գործոնները գնահատելու համար:

**ԳԱՐԱՆՏ-ԼԻՄԵՆ ԱՓԲ**  
 ՀՀ, ք. Երևան,  
 Մամիկոնյանց փող., շենք 30  
 (+374 10) 23-60-68,  
 29-77-50, 29-77-51  
 glin@arminco.com,  
 info@glinsurance.am  
 www.glinsurance.am

**ИНГО АРМЕНИЯ Ingo Armenia**  
**ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲ**  
 ՀՀ, ք. Երևան,  
 Տպագրիչների 8  
 (+374 10) 54-31-34  
 (+374 10) 59-21-21  
 info@ingoarmenia.am  
 www.ingoarmenia.am

**CASCADE INSURANCE**  
**ՎԱՍԿԱՐ ԲԵՆՈՒՐԱՆՍ ԱՓԲ**  
 ՀՀ, ք. Երևան,  
 Հր. Քոչարի 5/1  
 (+374 10) 22-21-11  
 info@cin.am  
 www.cascadeinsurance.a

**ՆԱԻՐԻ ԲԵՆՈՒՐԱՆՍ ԱՍՊԸ**  
 Հ Հ, ք. Երևան,  
 Պուշկինի 50,  
 (+ 374 10) 53-94-57,  
 53-94-58, 53-64-94  
 nairi@nairi-insurance.am  
 www.nairi-insurance.am

**RASCO INSURANCE**  
**ՌԱՍԿՈ ԱՍՊԸ**  
 ՀՀ, ք. Երևան,  
 Թումանյան 8  
 (+374 10) 58-50-93,  
 54-46-58  
 info@rasco.am  
 www.rasco.am

**RESO INSURANCE**  
**ՌԵՍՈ ԲԵՆՈՒՐԱՆՍ ԱՓԲ**  
 ՀՀ, ք. Երևան,  
 Նալբանդյան 9/30  
 (+37410) 56 05 50  
 (+374) 98-56 07 97;  
 99-56 07 97  
 info@ur.am  
 www.reso.am

**ՐԵՍԻՐԳՍԻՍՏՐԱՆ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԲ**  
 ՀՀ, ք. Երևան,  
 Հյուսիսային պող., շենք 1  
 (+374 10) 59-10-10  
 info@rgs.am  
 www.rgs.am

**ՍԻԼ ԲԵՆՈՒՐԱՆՍ ԱՓԲ**  
 ՀՀ, ք. Երևան,  
 Տիգրան Մեծի 39  
 (+374 10) 53-52-90,  
 52-63-88  
 info@silinsurance.am  
 www.silinsurance.am

## ԲՅՈՒՐՈՑԻ ՄԱՍԻՆ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ը պետության կողմից օրենքով ճանաչված ինքնակարգավորվող կազմակերպություն է, որի հիմնադիրն է ՀՀ Կենտրոնական բանկը և որին անդամակցում են ԱՊՊԱ իրականացնող ՀՀ ապահովագրական ընկերությունները:

## ԲՅՈՒՐՈՑԻ ՆՊԱՏԱԿ Է՝

- պաշտպանել ԱՊՊԱ ոլորտում տուժած անձանց շահերը,
- ապահովել ԱՊՊԱ համակարգի կայունությունն ու զարգացումը:

## ԲՅՈՒՐՈՆ ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ՝

- նպաստում է իր անդամ ապահովագրական ընկերությունների գործունեության արդյունավետությանը,
- կարգավորում և վերահսկում է նրանց գործունեությունը,
- մշակում է մասնագիտական վարքագծի կանոններ:

## ԲՅՈՒՐՈՆ՝

### 1. Հատուցում է ԱՊՊԱ ոլորտում տուժած անձանց վնասները, եթե՝

- վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու պարտականություն ունեցող անձն անհայտ է (Բյուրոն այս դեպքում հատուցում է միայն անձնական բնույթի վնասները),
- վնասը պատճառվել է այն ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որը չունի ԱՊՊԱ պայմանագիր,
- վնասը պատճառվել է հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ,
- վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունը ճանաչվել է անվճարունակ (սնանկ):

### 2. Անվճար հանդես է գալիս որպես տուժողի շահերի ներկայացուցիչ, եթե՝

- Տուժողը և վնաս պատճառած անձը ԱՊՊԱ պայմանագիր ունեն միևնույն ապահովագրական ընկերության հետ,
- Տուժողը հետիոտն կամ ուղևոր է և չունի կնքած և գործող ԱՊՊԱ պայմանագիր ՀՀ տարածքում գործող որևէ ապահովագրական ընկերության հետ:

### 3. Կտրամադրի Ձեզ անվճար խորհրդատվություն՝

- ԱՊՊԱ ոլորտում Ձեր իրավունքների և պարտականությունների վերաբերյալ,
- ԱՊՊԱ պայմանագրի կնքմանը վերաբերող ցանկացած խնդրի և ԱՊՊԱ սակագների վերաբերյալ,
- ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական հատուցումների գործընթացի վերաբերյալ:

## Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել



58-00-34, 58-00-43, (098) 55-18-55

[www.paap.am](http://www.paap.am)

[info@paap.am](mailto:info@paap.am)



